

Ժողովրդագրական գործոնի դերը Հայկական հարցում (1878-1914)

1877⁻⁷⁸ թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո միջազգային դիվանագիտության ասպարեզ է իջնում Հայկական հարցը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր. «առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից բխած բարելավումներն ու բարենորոգումները»:

Հայկական հարցի միջազգայնացումից հետո օսմանյան կառավարությունը ձեռնամուխ է լինում մի շարք միջոցառումների իրականացման, որոնք նպատակ ունեին լիովին վերափոխելու հատկապես «հայաբնակ մարզեր» ճանաչված՝ Արեւմտյան Հայաստանը կազմող վեց նահանգների (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Էրզրում, Խարբերդ, Սեբաստիա) ժողովրդագրական պատկերը՝ ինչպես թղթի վրա, այնպես էլ իրապես:

Օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականությունը վիճակագրության ասպարեզում տարվում էր քրիստոնյա (մանավանդ՝ հայ) բնակչության թվի կտրուկ նվազեցման եւ մահմեդականների թվի ավելացման ուղղություններով:

Հակահայկական ժողովրդագրական քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը դարձավ Արեւմտյան Հայաստանի վիլայեթների վարչական սահմանների վերաձեւումը, որի հիմքում ընկած էր Հայաստանն այնպես բաժանելու մտադրությունը, որ հայ բնակչությունն, ըստ հնարավորին, գրկվի մեծամասնություն լինելուց տվյալ վարչական միավորում: Եթե որեւէ գավառում կամ գավառակում հայերը մեծամասնություն էին կազմում, ապա այդ վարչական միավորը միացվում էր այնպիսի վիլայեթի, ուր մեծամասնություն էին կազմում մահմեդականները: Այդ եղանակով հայերի տոկոսը երկու վիլայեթներում էլ նվազեցվում էր:

Օսմանյան կառավարության հակահայկական ժողովրդագրական քաղաքականության տարրերից էր Արեւմտյան Հայաստանում մահմեդական վերաբնակիչների՝ մուհաջիրների բնակեցումը: Օսմանյան վիճակագրությունը արձանագրում էր, որ 1876-95 թվականների ընթացքում Թուրքիա է մտել 30 1,015,015 մահմեդական: Վերաբնակիչ յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվում էր հողակտոր եւ 2 եզ, նրանք ազատվում էին 10 տարով բանակում ծառայելու պարտականությունից, հարկերից: Կառավարությունը պարտավորվում էր նրանց համար տուն կառուցել կամ տան կառուցման համար գումար հատկացնել: Օսմանյան կառավարությունը մուհաջիրներին վերաբնակեցնում էր հատկապես ռուս-թուրքական սահական սահմանի երկայնքով, Սեբաստիայի, Տրապիզոնի, Էրզրումի վիլայեթներում, ինչպես նաեւ՝ Կիլիկիայում:

Չբավարարվելով նշված միջոցառումներով՝ օսմանյան կառավարությունը 1894-96 թվականներին իրականացրեց Արեւմտահայաստանի հայ բնակչության կոտորածներ, որոնց զոհ գնաց շուրջ 300,000 մարդ:

Իսկ Արդուլ-Համիդին հաջորդած երիտթուրքերն օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհ առիթը, ցեղասպանության միջոցով դատարկեցին օսմանյան կայսրությունն ու հատկապես Արեւմտյան Հայաստանը հայերից, նպատակ ունենալով ապահովագրելու ինչպես Արեւմտյան Հայաստանի պատկանելությունը թուրքական էթնոսին, այնպես էլ ճանապարհ բացելու թուրքական պետության ծավալապաշտական համաթյուրքական նկրտումների համար: